ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հաշվի առնելով համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը/վարչական՝ 569 054 595 ՀՀ դրամ և ֆոնդային՝ 310 237 871,3 ՀՀ դրամ/, ավագանու որոշման նախագծով և համայնքի ղեկավարի առաջարկով նախատեսվում է 2023 թվականի ծրագրերը շարունակելու, ավարտելու, ինչպես նաև 2024 թվականին նախատեսվող սուբվենցիոն և համայնքում պլանավորված ծրագրերը կատարելու համար, անհրաժեշտություն է առաջացել ՀՀ Բյուջետային համակարգի մասին օրենքի համաձայն վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդից՝ 13900954 ՀՀ դրամ է ուղղել համայնքի բյուջեի վարչական մասից, որպես նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝ առկա պարտավորությունների կատարմանը, ըստ որի

1.1.1 ծրագրի 4111 և 4252 հոդվածներին համապատասխանաբար ավելացնել 12285754 ՀՀ դրամ հարկային պարտավորությունների և 30000 ավտոլվացման ծառայությունների գծով առաջացած պարտավորությունները մարելու համար:

1.6.1 ծրագրի 4241 և 4264 հոդվածներին համապատասխանաբար ավելացնել 90000 ՀՀ դրամ չափագրման ծառայությունների և 1495200 ՀՀ դրամ դիզելային վառելիքի համար:

Վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդից նախատեսվում է 555153 641 ՀՀ դրամ ուղղել ֆոնդային մաս և կատարել բյուջեի ճշտում, ըստ որի

4.5.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել 459870105,7 ՀՀ դրամով, որից 307094369 դրամ 2024 թվականի նախատեսված Սիսիան համայնքի ճանապարհների և բակային հատվածների կապիտալ վերանորոգման սուբվենցիոն ծրագրի համար, 15000000 ՀՀ դրամ բնակավայրերի կամուրջների վերանորոգման համար, 2393202 ՀՀ դրամ Սիսիան համայնքի Սիսական փողոցի մայթերի կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը վճարելու համար, 4300000 ՀՀ դրամ Դուրյան 2, Սիսական 9, 11, 13, 15, 19, 46ա, 50, 50ա, Իսրայելյան 39, Արամ Մանուկյան 2, 3, 2ա, Նժդեհի 4, Ադամյան 11-ի բակային հատվածները և Շահումյան փողոցի սկզբնամասի ճանապարհների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, 20000000 ՀՀ դրամ Ույծ բնակավայր տանող ճանապարհի վերանորոգման աշխատանքների համար, 8600000 ՀՀ դրամ Գայի 1, 2, 4, 6, 7, 10, 12, 14, 15, Շահումյան 72 և 74, Զորավար Անդրանիկի 1, 3, 5 շենքերի հարակից փողոցների, Զորավար Անդրանիկի և Որոտնեցու փողոցի վերջնամասի, Այգեստան, Գետափնյա, Անդրանիկ Մանուկյան, Արցախի, Լալայան, Գորկու փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, ինչպես նաև 102482534,7 ՀՀ դրամ նախատեսված է համայնքի և բնակավայրերի այլ ճանապարհների և մայթերի նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:

5.1.1 ծրագրի 5129 հոդվածն ավելացնել 32000000 ՀՀ դրամով՝ որից 6000000 ՀՀ դրամ աղբամաններ ձեռքբերելու համար, 26000000 ՀՀ դրամ սանմաքրման աշխատանքների իրականացման համար մասնագիտական տեխնիկա ձեռքբերելու համար:

9.5.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել 149083268 ՀՀ դրամով, որից 110000000 դրամ <<Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն>> ՀՈԱԿ-ի շենքի կապիտալ վերանորոգման սուբվենցիոն ծրագրի համար, 5915818 ՀՀ դրամ՝ ֆուտբոլի խաղադաշտերի կառուցման համար, 33000000 ՀՀ դրամ՝ Սիսիան համայնքի պարի դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքների համար, 167450 ՀՀ դրամ ֆուտբոլի դպրոցի ներքևի պատի ամրացման աշխատանքների 5 տոկոսի վճարման համար:

6.4.1 ծրագրի 5129 հոդվածն ավելացնել 24000000 ՀՀ դրամով՝ ավտոաշտարակի ձեռքբերման համար:

8.2.7 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել 46000000 ՀՀ դրամով՝ Սիսիան համայնքի հուշարձանների շրջակա տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար:

8.6.1 ծրագրի 5112 հոդվածն ավելացնել 8000000 ՀՀ դրամով՝ Ույծ և Բնունիս բնակավայրերում խաղահրապարակների կառուցման և խաղասարքերի ձեռքբերման համար, ինչպես նաև 5113 հոդվածին ավելացնել 8000000 ՀՀ դրամ Սիսակ Նահապետի անվան հրապարակի նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:

9.1.1 ծրագրի 5112 հոդվածն ավելացնել 48000000 ՀՀ դրամով՝ Աղիտու բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության և վարչական շենքի նորոգման աշխատանքների համար, ինչպես նաև 5113 հոդվածին ավելացնել 20493048 ՀՀ դրամ, որից 493048 ՀՀ դրամը Շենաթաղ բնակավայրի ՆՈՒՀ-ի կատարված աշխատանքների 5 տոկոսի վճարման համար, 20000000 ՀՀ դրամը՝ ՆՈՒՀ-երի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման համար:

6.3.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել 13558481 ՀՀ դրամով, որից 11200000 ՀՀ դրամը Բնունիս, Դաստակերտ, Տորունիք, Սալվարդ բնակավայրերի խմելու ջրի ջրագծի նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, 158481 ՀՀ դրամը նախկին Գորայք համայնքի Սառնակունք բնակավայրի կոյուղագծի և սեպտիկ հորի աշխատանքների նախագծի, փորձաքննության, տեխնիկական և հեղինակային հսկողության համայնքի մասնաբաժնին ավելացված հինգ տոկոսի վճարման համար, 1100000 ՀՀ դրամ Տոլորս բնակավայրի 1-ին փողոցի և Որոտնավան բնակավայրի 1-ին և 2-րդ փողոցների կոյուղագծերի փոխարինման նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, 1100000 ՀՀ դրամ Անգեղակոթ բնակավայրի արոտավայրում գտնվող անասանխմոցի ջրամատակարարման վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:

1.1.1 ծրագրի 5122 հոդվածն ավելացնել 3643000 ՀՀ դրամով՝ Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կարիքների համար համակարգիչների, տպիչների, գրասենյակային կահույքի և այլ ապրանքների ձեռքբերման համար:

1.1.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել 52743610 ՀՀ դրամով, որից 13400500 ՀՀ դրամը Սիսիան համայնքի Սիսական 41 վարչական շենքի 3-րդ հարկի պատուհանների և ճակատային շարվածքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար, 4343110 ՀՀ դրամը Շենաթաղ բնակավայրի վարչական շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար, 35000000 ՀՀ դրամ Շաքի բնակավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար:

Ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից '

346000 ՀՀ դրամ տեղափոխել 1.1.1 ծրագրի 4215 հոդվածին հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 27-ի նախկին Գորայք համայնքի աշխատակազմի քարտուղար Վարուժան Վարդանյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը:

500000 ՀՀ դրամ տեղափոխել 8.2.3 ծրագրի 4511 հոդվածին հիմք ընդունելով 2024 թվականի հունվարի 19-ի <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Վարդանյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը:

1170000 ՀՀ դրամ տեղափոխել 1.6.1 ծրագրի 4241 հոդվածին՝ Սիսիան համայնքի Նորավան, Շենաթաղ, Բալաք, Անգեղակոթ, Ախլաթյան, Ծղուկ, Գորայք, Շաղատ, Աղիտու բնակավայրերի խմելու ջրի քլորացման ծառայություններ ձեռքբերելու համար, հիմք ընդունելով 2024 թվականի հունվարի 29-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ Վարդան Խաչատրյանի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը:

1000000 ՀՀ դրամ տեղափոխել 1.6.1 ծրագրի 4241 հոդվածին՝ Սիսիան համայնքի բնակավայրերի հիդրոերկրաբանական տեղեկատվության՝ ստորեկրյա ջրային ռեսուրսների ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար, հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 30-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արմեն Խաչատրյանի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը:

1800000 ՀՀ դրամ տեղափոխել 9.1.1 ծրագրի 4831 հոդվածին՝ դատարանի վճռով սահմանված գումարը վճարելու համար, հիմք ընդունելով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՍԴ1/0992/02/19 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը և համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 413-Ա որոշումը:

4000000 ՀՀ դրամ տեղափոխել 1.1.1 ծրագրի 4222 հոդվածին՝ արտասահման գործուղումների գծով ծախսերը հոգալու համար հիմք ընդունելով 2024 թվականի հունվարի 30-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման, ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Երվանդ Եղիազարյանի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը:

1000000 ՀՀ դրամ տեղափոխել 9.3.2 ծրագրի 4637 հոդվածին, հիմք ընդունելով 2024 թվականի հունվարի 16-ի <<Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Կարեն Հովհաննեսյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը:

Սիսիան և նախկին Գորայք համայնքների 2022-2023 թվականների կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը և 2024 թվական տեղափոխված թերի աշխատանքների և ծառայությունների գումարները վճարելու համար 66459057,9 ՀՀ դրամ տրամադրվել է պետության կողմից, որն պլանավորվել է ֆոնդային բյուջեի համապատասխան ծրագրերով և հոդվածներով, ինչպես նաև /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

07.02.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի եկամտային մասում բյուջեի մուտքերը կազմում են 945751524,2 ՀՀ դրամ իսկ ծախսային մասը կավելանա 945751524,2 ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

07.02.2024թ.